


ՄԵԾ ՀԱՅԱԳԵՏՈՐ

(Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դասական հայագիտության ամենախոշոր ներկայացուցիչներից մեկը՝ Մանուկ Աբեղյանը ծնվել է Նախիջևանի Թագաթենդ (հետագայում վերանվանված Աստապատ՝ մոտակայքի ավերակ ավանի անունով) գյուղում 1865 թ. մարտի 17-ին (հին տոմարով՝ 5-ին) հողագործ հաշատուր Աբեղյանի ընտանիքում։ Հայրը՝ անդրաճանաչ, բայց ուսման հարզն իմացող նահապետական մի գեղջուկ, ձգտում է ամեն կերպ ընդառաջել կրթության ուղիմ և խելացի որդու ուսումնաժարավ հակումներին։ Յոթ տարեկան Մանուկին հաշատուրը տալիս է գյուղի խալֆաների մոտ սովորելու։ Տարիներ անց, երբ նա բավականաչափ հմտանում է գրաճանաչության մեջ, հայրը նրան ուղարկում է մոտակա Կարմիր վանքի նոր հիմնարկված դպրոցը։ Հինգ-վեց ամիս վանքում սովորելուց հետո, մի երջանիկ դիպվածի և հոր թափած ջանքերի շնորհիվ՝ 1876 թ. Մանուկը դառնում է էջմիածնի Գեորգյան նորաբաց ճեմարանի աչակերտ։ Այստեղ Աբեղյանը սկզբից ևս իր փայլուն ընդունակություններով իր վրա է գրավում ճեմարանի ուսուցիչների ուշադրությունը։ Պատանու հայացքների ձևավորման վրա մեծապես ազդում են ճեմարանի նշանավոր մանկավարժ-հայկաբաններ Ստ. Պալասանյանը, Կարապետ Կոստանյանը, Սեդրակ Մանգինյանը, որոնց անձամբ աչակերտում է նա 1885 թ. «յոյժ գովելի» գնահատականներով և առաջնակարգ մրցանակազրով Աբեղյանն ավարտում է ճեմարանը, և իր արժանիքների շնորհիվ նշանակվում ճեմարանի դպրանոցական բաժնում հայոց լեզվի ուսուցիչ և դրադարանապետ։



Աբեղյանը, որի վրա մեծ տպավորություն էր գործել Գ. Սրվանձտյանը, ճեմարանական նստարանից սկսած՝ զբաղվում է ժողովրդական բանահյուսության և ազգագրական նյութերի գրառումով։ Դրանց մեջ ամենաարժեքավորն էր 1886 թ. ճեմարանի դոնապան մոկացի Նահապետից (Նախո քեռի) գրառած «Սասնա ծռեր» ժողովրդական նորահայտ վեպի նոր պատումը, որը Գ. Սրվանձտյանի 1874 թ. հրատարակածից հետո երկրորդն էր ոչ միայն ժամանակագրական, այլև՝ տիպարանական-տեղագրական առումով։ Աբեղյանի գրա-

ոած տարբերակով՝ հայտնագործվում էր Մշո պատումին զուգահեռ Մոկաղ պատումը, իր ուրույն կերպաբանական, ոճական ու կառուցվածքային նկարագրով:

Երկու տարի ճեմարանում աշխատելուց հետո՝ 1887 թ. Աբեղյանն ինքնահոժար թողնում է էջմիածինը և կարգվում Շուշվա թեմական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Շուշիում պաշտոնավարելու երկու տարիները Աբեղյանի կենսագրության մեջ նշանավորվում են երկու կարևոր իրադարձությամբ: 1888 թ. լույս է տեսնում սեփական բանաստեղծությունների դիրքը («նմուշներ»), իսկ 1889 թ. էջմիածնից գրառած ժողովրդական վեպի պատումը («Գավիթ և Մհեր»): Առաջինը մեկրնդմիշտ համոզում է Աբեղյանին ձեռքառել բանաստեղծություն գրելուց, մինչդեռ երկրորդը միահամուռ բարձր է գնահատվում նշանավոր գիտնականներից ու հրապարակախոսներից (Մառ, Հեռ, Հեռն Սարգսյան) և վերջնապես կողմնորոշում Աբեղյանին իր նախասիրությունների ընտրության մեջ: Նույն 1889 թ. «Մուրճ»-ում, Սրվանձտյանի և իր պատումի հիման վրա հրատարակած «Ազգային վեպ» հետազոտությամբ Աբեղյանը դառնում է հայ ժողովրդական նոր վեպի ոչ միայն գրառողը, այլև առաջին լուրջ ու հանգամանալից ուսումնասիրողը: Ահա թե ինչու 1889 թ. դառնում է Աբեղյանի գիտական կենսագրության սկզբնաթիվը, նրա մեծ ու արդյունաշատ կյանքի փառամուտը: Սակայն կյանքը նորանոր հորձանուտների մեջ է քաշում իր ուժերի զարթոնքն ապրող երիտասարդ Աբեղյանին: 1889 թ. նա իր ճեմարանական ուսուցիչ, ապա Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանի տեսուչ Փիլիպոս Վարդանյանից հրավեր է ստանում վարժարանում հայոց լեզու և գրականություն դասավանդելու համար: Աբեղյանն ընդունում է, հրավերը և այնուհետև սկսվում է նրա Թիֆլիսյան կյանքի առաջին բուռն շրջանը: Մանկավարժական աշխատանքներին համատեղ նա Թիֆլիսում լրագրային աշխույժ գործունեություն է ծավալում «Նոր Դար»-ում: Սկզբում «Վարսամ» և «Գիսավոր» կեղծանունների տակ գանազան մատենախոսություններով թղթակցում է թերթին, իսկ 1890 թ. սկսած վարում է թերթի մատենախոսական բաժինը: Աբեղյանը գրաքննադատական, հրապարակախոսական հոդվածներում ու մատենախոսություններում արձագանքնում ժամանակի հասարակական ու գրական-մշակութային հուզող հարցերին ու պահանջներին, առաջ է քաշում ու պաշտպանում այնպիսի հայացքներ ու սկզբունքներ, որոնք նպաստում էին ժողովրդի մշակութային-բարոյական զարգացմանը: Ազգային հասարակական խնդիրներում Աբեղյանը հանդես է գալիս իրեն դեմոկրատ-հայրենասեր, ժողովրդի անմեջական ցավերով տառապող, ազդայիս սեփական լեզվի ու մշակույթի ջերմ նախանձախնդիր ու պաշտպան: Ընտանիքի, կնոջ, բարքերի և այլ խնդիրներում Աբեղյանն ազատամիտ էր, հասարակական բարքերի փոփոխության կողմնակից, բայց չափավոր: Արվեստի և գրականության խնդիրներում Աբեղյանը կարևոր արժեք է տալիս նրանց հասարակական-գաստիարակչական դերին: Ժամանակի հայ թատրոնին նվիրված առաջնորդող հոդվածներում Աբեղյանը բարձր է գնահատում ժողովրդի կրթության, բարոյական դաստիարակության գործում թատրոնի խաղալիք դերը: Թատրոնն ըստ Աբեղյանի մի իսկական դպրոց է, ուր հասարակությունը դասեր է առնում, ազնվացնում և քնքշացնում է իր բիրտ հակումներն ու կոպիտ բարքերը: Կյանքի նկատմամբ արվեստի այդ վերափոխիչ նշանակության գնահատումը Աբեղյանի կողմից

նույնանում է՝ զրական երևույթների նրա արժեքավորման հետ։ Երիտասարդ Արեղյանը ելնելով ռեալիստական գեղագիտության սկզբունքներից միանգամայն առողջ չափանիշներով է դնահատում ժամանակի հայ զրական դեմքերն ու երևույթները։ Երական անդաստանը հեղեղած բազմաթիվ սկսնակ բանաստեղծների ու գրողների զործերից Արեղյանը զրականագիտական ներքնատեսությամբ առանձնացնում և ստույգ գնահատում է հետագայում հայ զրականության նշանավոր դեմքեր դարձած Թումանյանի, Մատուրյանի, Հակոբյանի անդրանիկ ստեղծագործությունները, դրանց մեջ բացահայտելով ու արժեքավորելով բոլոր այն կենսունակ սաղմերը, որոնք դարձան տվյալ հեղինակների զրական ապագա դիմապատկերների բնորոշ գծերը։

Արեղյանին այլևս չէին բավարարում ճեմարանից ստացած գիտելիքները, նա ձգտում է նվթապա՝ բարձրագույն կրթության։ Բարեկամների աջակցությամբ ու միջնորդությամբ 1893 թ. Արեղյանին հաջողվում է մեկնել Գերմանիա ուսանելու 1893 թ. նա ընդունվում է Ենայի համալսարանը իբրև բանասիրության և փիլիսոփայության ուսանող։ Երկու կիսամյակ ուսանում է Ենայում, երեք կիսամյակ՝ Լայպցիգում, և երեք՝ Բեռլինում, որից հետո, 1895-ին անցնում է Փարիզ, մեկ տարի ուսանում Սորբոնում իբրև բանասիրության ազատ ունկնդիր։ Խորամուխ լինելով գերմանական բանասիրության, գլխավորապես պատմության, լեզվի և զրականության մեջ, հատկապես ուսումնասիրելով ֆրանսիական զրականությունը, լեզուն ու զրականության տեսությունը, Արեղյանը 1898 թ. ավարտական քննություններ է հանձնում Ենայի համալսարանում, քննության համար գլխավոր ճյուղ է ընտրում ընդհանուր պատմությունը, իսկ երկրորդական ճյուղ՝ համընդհանուր փիլիսոփայությունը և ֆրանսերեն լեզուն։ Ընթացմանակ որպես ավարտական դիսերտացիա Արեղյանը պաշտպանության է ներկայացնում «Der armenische Volksglaube» (Հայ ժողովրդական հավատալիքը) պատմա-համեմատական բնույթի հետազոտությունը, որ քննվում է և բարձր գնահատականի արժանանում Ենայի համալսարանի պրոֆեսոր, Արեղյանի երախտավոր դասախոս, նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Հայրիխ Գելցերի կողմից։ Արեղյանը փայլուն կերպով ավարտելով համալսարանը փիլիսոփայության դոկտորի տիտղոսով ու դիպլոմով, 1898 թ. վերադառնում է Թիֆլիս և անմիջապես Գևորգյան ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանից հրավեր է ստանում ճեմարանում դասախոսելու համար։ Արեղյանն ընդունում է հրավերը. սկսվում է Արեղյանի գիտական կենսագրության երկրորդ րոտն ու ծաղկուն ժամանակաշրջանը։

Արեղյանը Գևորգյան ճեմարանում դասավանդում է շուրջ 16 տարի՝ 1898—1914 թթ.։ Ստանձնած հիմնական առարկաներին (հայոց լեզու և զրականություն) զուգընթաց Արեղյանը հիշյալ ժամանակամիջոցում դասավանդում է նաև հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, ընդհանուր զրականություն, զրականության տեսություն, գերմաներեն։ Արեղյանը ճեմարանի ուսումնական ծրագրում, հատկապես զրականության ընդհանուր ծրագրի մեջ իբրև առանձին առարկա ու դասընթաց, մուծում է ժողովրդական բանահյուսությունը, դասավանդում այն և այնուհետև գիտության այդ բնագավառը ընդմիջտ կապվում է նրա անվան հետ։ Ընթացմանակ հիշյալ 16 տարիները դառնում են Արեղյանի գիտական գործունեության ամենաարդյունաշատ ժամանակաշրջանը։ Իր դասավանդած հիմնական առարկաները՝ հայոց լեզուն,

հայ գրականությունը և հայ ժողովրդական բանահյուսությունն Արեղյանը ենթարկում է գիտական սխտեմավորման և խոր ու մանրակրկիտ հետազոտությունների, որոնք տարիների ընթացքում տակավ առ տակավ ամբողջանալով, վերածվում են գիտական նոր ու թարմ տեսությունների: Ճեմարանում դասավանդելու տարիներին Արեղյանը գրում և հրատարակում է «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորեցանու Հայոց պատմության մեջ» (1899), «Ժողովրդական իտղեր» (1904), «Աշխարհաբարի քերականություն» (1906), «Հայ ժողովրդական վեպը» (1906—08), «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912), «Շարականների մասին» (1912), Մ. Խորենացու Հայոց պատմության գիտական-քննական բնագիրը (Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ, 1913) և այլն: Արեղյանի ճեմարանական գործունեությունը համընկնում է ուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանին, երբ ճեմարանում գլուխ բարձրացրած ուսանողական շարժումը սարսում է ճեմարանի վարչական և ուսումնական-դաստիարակչական հնացած սխտեմի հիմքերը: Արեղյանն իր հայացքներով ու գործուն միջամտությամբ դառնում է ճեմարանի վարչակարթական հին դրվածքը հիմնովին վերակառուցելու նախանձախնդիրներից մեկը: Առհասարակ հնի, տգիտության ու խավարի դեմ Արեղյանի ունեցած անհանդուրժող վերաբերմունքի և ճեմարանում ծայր առած խարդավանքների պատճառով հակասությունները վանական իշխանությունների հետ ծայր աստիճանի սրվում են և ի վերջո 1914 թ. Արեղյանը ստիպված թողնում է ճեմարանն ու փոխադրվում Թիֆլիս: Սկզբում պաշտոնավորում է ներսիսյան դպրոցում իբրև գրաբարի ու հայ հին գրականության ուսուցիչ, ապա նաև հայկական պետական գիմնազիայում (1917): Թիֆլիսյան տարիները Արեղյանի գիտական կենսագրության մեջ աչքի են ընկնում որպես հայ հին դրականության գաղափարական ու գեղարվեստական էական կողմերի ու օրինաչափությունների բացահայտման շրջան: Այդ տարիներին նա խոշոր գյուտեր է կատարում հայ դրականության պատմության մեջ:

Արեղյանը մեծ հույսերով ու խանդավառությամբ է ընդունում Փետրվարյան և ապա Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: 1919 թ. նա վերադառնում է Հայաստան և բնակություն հաստատում Երևանում, իր ամբողջ ուժերն է սպաս դնելով բզկտված ու անկման եզրը հասած հայրենիքի գիտական ու մշակութային նորոգման գործին:

Այդ և հետագա տարիներին Արեղյանը կատարում է պետական մի շարք կարևոր հանձնարարություններ ու պաշտոններ: Նա կազմում և կանոնավորում է հայերենի ուղղմական տերմինաբանությունը, որի արդյունքն ու ամփոփումն է դառնում 1925 թ. լույս տեսած «Ռուս-հայերեն ազգական բառարանը»: 1921 թ. Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Արեղյանը կազմում է հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման նախագիծը, որը հետագայում հատուկ դեկրետով հաստատվում է և գործադրվում: 1923 թ. կարգվում է Երևանի պետական համալսարանի պատմա-դրական ֆակուլտետի դեկան ու դասախոս: Իսկ 1925 թ. երբ հիմնադրվում է Սովետական Հայաստանի անդրանիկ գիտական կենտրոնը՝ դիտության և արվեստի ինստիտուտը, Արեղյանն ընտրվում է հիշյալ ինստիտուտի խորհրդի նախագահ և հինգ տարի շարունակ պատվով կատարում այդ կարևոր ու պատասխանատու պաշտոնը: 1926 թ. հաստատվում է Երևանի պետահամալսարանի պրոֆեսորի պաշտոնում, իսկ 1935 թ. ստանում է գիտության վաստակավոր գործչի սպաս-

«վավոր կոչում և առանց դիսերտացիա պաշտպանելու՝ բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան»:

Սովետական տարիներին Աբեղյանը հիմնականում ավարտում է կամ չկրամշակում նախորդ տարիներից կիսատ մնացած կամ պատրաստի հետազոտությունները, միաժամանակ դրանց շարքն ընդարձակում է նոր մեծարժեք աշխատություններով: Այսպես, 1931 թ. լույս է բնծայում «Հայոց լեզվի տեսություն» և «Հին գուսանական-ժողովրդական երգեր» նշանավոր ուսումնասիրությունները, 1933 թ.՝ «Հայոց լեզվի տաղաչափությունը», 1940 թ. «Գուսանական-ժողովրդական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ» գիտական ժողովածուները և Կորյունի «Վարք Մաշտոցի» քննական բնագիրը՝ աշխարհաբար թարգմանությամբ: Իր պատկառելի տարիքում Աբեղյանը պետական հանձնարարությամբ ստեղծում է երկու վիթխարի գործեր. մեկը՝ Կ. Մելիք-Մանուկյանի գործուն աշխատակցությամբ կազմած ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» եռամասնյա ամբողջական գիտական հրատարակությունն է (1936, 1944, 1951), մյուսը՝ մահվանից փոքր-ինչ առաջ գրած Հայոց հին գրականության երկհատոր պատմությունը (1944, 1946): Մահվանից մեկ տարի առաջ՝ 1943 թ. Աբեղյանը հաստատվում է Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմում իբրև ակադեմիկոս, որով բոլորովն է մեծ հայագետի ծանր ու քրտնաջան կյանքի փառաշրջանը:

Աբեղյանը հայագիտության մեջ հանդես եկավ նախ որպես բանահավաք-բանագետ, ապա աստիճանաբար խորացումներով ու ընդգրկումներով ընդլայնեց իր գիտական տեսադաշտը և հիմք դրեց հայ ժողովրդական բանահյուսության տարրեր տեսականների գիտական խոր ու ծանրակշիռ տեսություններին: Իսկ իմաստով հայ բանագիտությունը սկզբնավորվում է Մանուկ Աբեղյանով. նախորդները տվյալ գիտության միայն բեղմնավոր նախապատրաստողներն են հանդիսանում: Աբեղյան-բանագետի շահախնդրությունների առարկան հայ բազմադարյան ժողովրդական բանահյուսությունն է իր երկու էական բազադրիչներով՝ վիպական և քնարական ժանրերով: Հայ վիպական բանահյուսության ուսմունքը սկսում է մշակվել Աբեղյանի կողմից տակավին իր գիտական կյանքի սկզբներին, երբ հրապարակ է հանում հայ ժողովրդական նորահայտ վեպի երկրորդ պատումը («Իսկիթ և Մհեր») և նրա մասին գրած իր անդրադիտական հետազոտությունը («Ազգային վեպ»): Հայ ժող. վեպը, որի հետ առմիշտ աղերսվում է Աբեղյանի գիտական ճակատագիրը, դառնում է վիպական բանահյուսության նրա մշակած տեսության կայուն ողնաշարը: 1906—1908 թթ. հրատարակած «Հայ ժողովրդական վեպը» ծանրակշիռ հետազոտության մեջ նա մշակում է հայ ժողովրդական վեպի մի կուռ, անսասան տեսություն, որը տիրապետող դարձավ հետագայի հայ բանագիտության մեջ: Առաջին էական խնդիրն այն էր, որ Աբեղյանը գիտականորեն ապացուցում էր «Սասնա ծռերի» ազգային-ժողովրդական բնույթը՝ այն, որ վեպը դուրս գալով իր բնօրրանից՝ Սասնո սահմաններից, վերածվել է համազգային, համաժողովրդական վեպի: Այսինքն՝ հավաստելով չքավոր ներքնախավերի միջավայրում վեպի պահպանման ու կենցաղավարման իրողությունը, դրանով Աբեղյանը հիմնավորում է և բացահայտում վեպի աշխատավորական-դյուրացիական զաղափարախոսությունը: Մյուս կողմից՝ հայ ժողովրդական վեպի կոնկրետ օրինակով ու փաստերով Աբեղյանը հայ բանագիտության մեջ մշակում ու զարգացնում է ժողովրդական վեպի ծագման ու զարգացման մի կուռ ու հիմնավոր տեսություն: Ըստ այդմ՝

վեպր դիտելով որպես պատմական ղեպքերի ու իրադարձությունների (իմա՝ իրականության) բանաստեղծական ընկալում ու վերադրություն, ուր միահյուսվում են ժողովրդական երևակայության մեջ առկա դերբնական, առասպելական ու հրաշալի պատկերացումներն ու պատումները, հին ու նոր հավատալիքները, Աբեղյանը բանասիրական հմտությամբ ու փիլիսոփայական խորությամբ բացահայտում է հայ ժողովրդական վեպի կաղմաբանության էական բաղադրիչները: Կաղմաբանական այդ բաղադրիչները ըստ ձևի ու բովանդակության Աբեղյանը ցուցահանում է պատմա-դեղարվեստական երեք հիմնական հարաբերությունների մեջ.

ա) վեպի՝ իրականության (աշխարհագրական միջավայր, ժողովրդական կենցաղ, պատմական կյանք) հետ ունեցած հարաբերությունը.

բ) վեպի՝ ժողովրդական առասպելների, հին ու նոր հավատալիքների հետ ունեցած փոխառնչությունը.

գ) «Սասնա ծռերի»՝ հին վեպերի ու վիպական զրույցների հետ ունեցած աղերսակցությունը: Այս երեք էական խնդիրների հանգամանալից քննությամբ էլ Աբեղյանը լուսաբանում է «Սասնա ծռերի» բուն բովանդակությունն ու հատկությունները: Վիպական գործողություններն ու հերոսներին համեմատելով միջնադարյան Հայաստանի պատմա-քաղաքական նշանավոր անցքերի ու անձերի հետ և բացահայտելով բաղմաթիվ նույնություններ ու նմանություններ. Աբեղյանն աներկբա ապացուցում է, որ «Սասնա ծռեր» վեպի էական պատմական միջուկը կաղմում են IX դարի երկրորդ կեսերին Սասունում և Տարոնում հարկահանության դեմ մղված ապստամբական կռիվները: Այդ միջուկը, սակայն, նույնությամբ ու մեկուսի չի մնում, այլ խավավորվում ու կերպարանափոխվում է հետագա դարերի պատմական իրադարձություններով: Աբեղյանը վեպը համարում է հիմնականում VIII—XIII դարերի պատմական իրադարձությունների արձագանք ու արդյունք:

Անցնելով վեպի վիպական բաղադրության կամ շերտավորման խնդրին, Աբեղյանը պատմա-բանասիրական խորիմաստ քննություններով ապացուցում է, որ «Սասնա ծռերը» բաղադրիչ տարրերով ու հիմնական ոգով ավելի հին է, քան IX դարը, որ այն իր մի քանի վիպական պատումներով (Սանասարի և Խանդուբի զրույցներ) սերում է խոր հնադարից, իսկ հիմնական գծերով՝ վաղ միջնադարից (Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարի վերաբերյալ վիպական զրույցներ): Հարյուրամյակների ընթացքում պատմական նորանոր ղեպքերի ազդեցությամբ կերպարանափոխվելով, IX—XIII դդ. այդ պատումները ընդունում են վեպի արդի կերպարանքը: Այդ առթիվ Աբեղյանը հայագիտության մեջ մի խոշոր հայտնագործություն է կատարում. Ազաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի մոտ պահպանված վիպական պատումների ու զրվագների հիման վրա, որոնց ժողովրդական բանահյուսական բնույթը հավաստված էր նախորդ հայագետների կողմից, Աբեղյանը վերականգնում և ապացուցում է հայ հին ժողովրդական մի ամբողջական վեպի դոյությունը, որի գաղափարական հիմնական ոգին օտար նվաճողների (պարսիկներ) դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարն էր: Պայմանականորեն «Պարսից պատերազմ» կոչված այդ համազգային վեպն էլ (որի գեղարվեստական ու գաղափարաբանական մանրամասն հետազոտությունը նա կատարում է հետագայում՝ 30-ական թվականներին) ըստ Աբեղյանի հիշյալ տեսության՝ հայ պետականության անկման և հե-

տազա դարերի պատմական իրադարձությունների ազդեցության տակ կերպար-
փոխվում, կորցնում է իր համազգային բնույթը, նեղանում և տեղայնանալով
Տարոնում ու Սասունում դառնում է տեղական վեպ, որի զարգացման ու կեր-
պարանափոխման հաշորդ աստիճանն ու որակը դառնում է «Սասնա ծռերը»:

Երրորդ կարևոր խնդիրը՝ «Սասնա ծռերի» առասպելա-դյուցազնական
կողմի, կամ վեպի՝ հին ու նոր պատկերացումների և հավատալիքների հետ ու-
նեցած աղերսակցության բացահայտումն է, որ կատարում է Արեղյանը իրեն
հատուկ նրամատությամբ ու ներքնատեսությամբ: Նախորդ երկու հարցերից
տրամաբանորեն բխում էր այս երրորդը, այսինքն՝ այն, որ իբրև իրականու-
թյան և վիպական ավանդականության բաղկացուցիչ տարր, վեպին են փո-
խանցվում նաև նույն այդ իրականության մեջ կենցաղավարող հավատալիք-
ներն ու դյուցազնական առասպելները: Եվ Արեղյանը Սանասարի, Մհերի,
Դավթի վերաբերյալ վիպական առասպելապատում դրվագների մեջ բացա-
հայտում է հորենացու ավանդած Տիգրանի ու Աժդահակի, Արտավազդ-Սաթե-
նիկ-Արտաշեսի մասին եղած հնօրյա առասպելները, այն էլ նույն հերթակա-
նությամբ, որպիսին առկա է Վիպասանքում: Դրան զուգահեռ բացահայտվում
են վեպում անդրադարձած հին հեթանոսական հավատալիքներն ու քրիստո-
նական կրոնա-բարոյական գաղափարախոսությունը, որոնք հաշտեցված են
իրար հետ և լրացնում են միմյանց: Վեպը դիտելով իբրև պատմական բանաս-
տեղծություն, Արեղյանն ի վերջո ապացուցում է, որ «Սասնա ծռերը» իր մեջ
խտացնելով հայ ժողովրդի բազմադարյան կյանքի իմաստն ու բովանդակու-
թյունը, վերածվել է ժողովրդի կյանքն ու հոգին գեղարվեստորեն արտացոլող
մի իսկական հայելու: Այդպիսով, Արեղյանը հայ ժողովրդական վեպի մասին
շուրջ վաթսուն տարի առաջ ստեղծում է ժամանակի եվրոպական գիտության
մակարդակին համապատասխան մի խոր ու բազմակողմանի տեսություն, գի-
տական լայն ճանաչման ղեկավար «Սասնա ծռերի» պատմա-ազգագրական և քա-
ղաքացիական բարձր արժեքը: Հետագայում, 30-ական թվականներին «Հա-
վիպական բանահյուսությունը» անտիպ աշխատության և «Սասնա ծռերի» նե-
րածության մեջ վեպը քննում է նաև սոցիոլոգիական մեկնակետից, վեպի
պատմական կերպարանափոխության հետ առաջ է քաշում նաև սոցիալական
կերպարանափոխման խնդիրը, և այդ հարցում րնկնում է որոշ ծայրահեղություննե-
րի մեջ:

Վիպական բանահյուսության բնագավառում Արեղյանի հաջորդ քայլը հայ
ժողովրդական առասպելների և հավատալիքների հետազոտությունն է: 1889 թ.
Հայպցիզում հրատարակած «Հայ ժողովրդական հավատալիքը» գերմաներեն
աշխատության մեջ Արեղյանը ժամանակի հայ ազգագրության սահմանափակ
տվյալների, մատենագրական հին վկայությունների հիման վրա, հնդեվրոպա-
կան ժողովուրդների համանման հավատալիքների համեմատությամբ վերա-
կանգնում է հայ ժողովրդական հավատալիքների համեմատարար ամբողջա-
կան պատկերը և ենթարկում պատմա-ազգագրական հետազոտության: Եւ հա-
ջագագրության պատմության մեջ ժողովրդական հավատալիքների առաջին
ամբողջական պատմա-համեմատական ուսմունքն է, որ ցարդ մնում է եզակի
ու չգերազանցված: Նույն տարին գրած «Հայ ժողովրդական առասպելները
և՛. հորենացու Հայոց պատմության մեջ» ծավալուն աշխատությամբ Արեղյանը
թեմատիկում է հայ բանասիրության մեջ քանիցս արժարժված հնավանդ վիպա-
կան-առասպելական գրույցների բնագավառը և ի նորո, հիմնովին ու քննադա-

տարար և դարձյալ ժամանակի իշխող պատմա-համեմատական մեթոդով քննության է առնում խորենացու ավանդած վիպական հատվածների ծագման բանահյուսական խնդիրը և հանգում մեծարդյուն հետևությունների: Քննադատորեն յուրացնելով նախորդ հայագետների հիշյալ խնդրի շուրջ արտահայտած թեր ու դեմ տեսակետները, նոր մոտեցումով ու քննություններով ապացուցում է նշված հատվածների բանահյուսական ծագումն ու բնույթը և դրանք բաժանում է երկու հիմնական խմբի՝ ա) բուն առասպելյան և բ) վիսլական-պատմական գրույզներ: Արեղյանը բանասիրական ու պատմա-համեմատական հմուտ քննություններով ցույց է տալիս, որ Վահագնի, Հայկի և Բելի, Անդեղյան Տորթի, Տիգրանի և Ածղահակի, Արայի և Շամիրամի, Սանասարի մասին պրավոր ավանդված երգերն ու պատումները հին հայերի դիցարանական-դիցազնական առասպելներն են, ուր բնության ուժերն ու երևույթները մարմնավորող ընդհանուր առասպելական մոտիվներն ու կերպարները տեղայնացվել են, պատմականացել, ձևոք բերելով հայոց պատմական կյանքին բնորոշ գծեր: Արեղյանը գորեղ փաստերով ու փաստարկներով վերջապես հավաստում է Վահագնի հայոց ամպրոպային աստվածություն լինելը, հերքելով նրան արևային աստված համարելու մինչև այդ եղած վարկածը:

Ստար և հայրենի առասպելա-դիցարանական համանման մոտիվները բաղդատությամբ Արեղյանը ճշտում և վերականգնում է հայկական առասպելների նախնական նկարագիրը և ցույց տալիս, որ հայ ժողովուրդը ևս ավագ ու տարեկից դասական ժողովուրդների նման ունեցել է իր գեղեցիկ դիցարանությունը, որն իր կուլտուր-պատմական ու գեղարվեստական արժեքով հավասար է դասվում համաշխարհային առասպելաբանության նշանավոր հուշարձաններին:

Ջրույցների երկրորդ խումբը, որ ընդգրկում է Երվանդի, Արտաշեսի, Սաթենիկի, Արտավազդի, Արգավանի և այլոց մասին պատումները և ըստ խորենացու կոչում՝ Վիպասյանք, Արեղյանը համարում է պատմա-կենցաղային առասպելական վեպ (հետազայում անվանում է պատմա-առասպելական վեպ մի տեսակ անցում առասպելից դեպի ժողովրդական վեպը): Վերլուծելով հիշյալ գրույցները, Արեղյանը ցույց է տալիս, թե ինչպես հայ ժողովրդի պետական ու քաղաքական կյանքի զարթոնքի հետ աստիճանաբար ծագում են նոր պատմական երգեր, գրույցներ ու ավանդություններ, արտացոլելով ժողովրդի վաղ պատմական կյանքի իրողություններ՝ օժտված նախորդ շրջանի վիպական-առասպելական պծերով:

Հայ վիպական բանահյուսության իր տեսությունն Արեղյանը բոլորում է «Վիպական երգեր» (1940) արժեքավոր ուսումնասիրությամբ, ուր ծագումնաբանական ու պատմա-ձևաբանական հետազոտության են ենթարկվում հայ բազմադարյան ժողովրդական բանահյուսության հին տեսակներից մեկը՝ վիսլական երգերը և մեծ վեպերի հետ նրանց ունեցած փոխհարաբերության խնդիրը: Եթե նախորդ հետազոտությունների մեջ վեպերի ծագումը քննվում էր պատմական լայն տեսադաշտի վրա, և այն պատճառաբանվում պատմական նշանավոր դեպքերով ու իրադարձություններով, ապա այստեղ պատմա-բանասիրական ուշադրավ քննություններով քաջահայտվում են կոնկրետ եղելությունների վրա ծագած այն սկզբնական վիպական տարրերը, որոնք օգտագործվել են հետագայում վիպասանների կողմից մեծ վեպերը հորինելիս: Պատմա-կենցաղային գորեղ փաստերով ու կոմպաններով Արեղյանը հավաս-

տում է, որ առաջին կարևոր պրպագան տարրը կոնկրետ դեպքերի ազդեցությամբ ծագած լացի և կոծի երգերն են կամ «յալեաց բանաստեղծությունը», որ լինելով «կատարված դեպքերի անմիջական բանաստեղծական հիշողություններ», տարածվել են և մասամբ հիմք դարձել հետագա վիպական պատմական երգերին: Վեպերի երկրորդ և ավելի կարևոր սյուժետային տարրերն, ըստ Արեղյանի, հին պոսանների պատմական, վիպական հոգեոն են՝ ծագած ավանդություններից ու գրույցներից, մասամբ և կոծի երգերից: Ապա հայ վիպական պատմական երգերի կոնկրետ նմուշների («Լեոնի երգը», «Մոկաց Միրզա», «Նարեկացի», «Կարոս խաչ», «Ասյան աղա» և այլն) քննությամբ Արեղյանը բացահայտում է այն պատմական ու ձևաբանական աստիճանական զարգացումը, որ իրական դիպվածից ծագած վիպական երգը կրում է ըստ ձևի ու ըստ բովանդակության և երկար ժամանակի ընթացքում վերածվում է ընդարձակ երգ ու պատմվածքի և ընդհանուր ձևաբանական բնույթով մոտենում է «Սասնա ծռերի» տարրերակներին:

Հայ վիպական բանահյուսության բնագավառում կատարած իր բազմամյա հետազոտությունները Արեղյանը 1930-ական թթ. ամփոփում է «Հայ վիպական բանահյուսություն» մոնումենտալ աշխատության մեջ, ուր իր տարիների տեսական եզրակացությունների հիման վրա սահմանում է հայ վիպական բանահյուսության պատմա-ձևաբանական զարգացման օրինաչափությունները, բխեցնելով դրանք ժողովրդի պատմական կյանքի ընթացքից ու առանձնահատկություններից: Արեղյանը հայ հազարամյա վիպական բանահյուսության զարգացման փուլերը ամփոփում է ժանրային, թեմատիկ-ժամանակադրական հինգ շրջանների մեջ: Առաջին շրջանի մեջ ներառվում և քննվում են նախնական հմայֆներև ու աուսսսլեները. երկրորդում՝ առասպելական վեպը (Վիպասանք) — իրրե անցում առասպելից ժողովրդական վեպը. երրորդ շրջանում՝ «Պարսիս պատերազմ» երկրորդ հին վեպը. չորրորդում՝ «Տառնի պատերազմ» կոչված տեղական վեպը և վերջապես հինգերորդ շրջանում՝ «Սասնա ծռեր» և վիպական երգերը: Սրանով Արեղյանը ներկայացնում է հայ վիպական բանահյուսության ծագման ու պատմական զարգացման համակարգն ու ժանրակչիո տեսությունը:

Ժողովրդական բանահյուսության երկրորդ կարևոր ճյուղը, որի վերաբերյալ մեզանում գիտական ուսմունք է ստեղծել Արեղյանը՝ ժողովրդական քնարերգությունն է: Դեռևս իր ստեղծագործական կյանքի սկզբներին, երբ ժողովրդական երգը Կոմիտասի շնորհիվ դարձել էր հատուկ ուշադրության առարկա, Արեղյանը ճեմարանում Կոմիտասի ընկերակցությամբ ձեռնարկում է ժողովրդական երգերի գրառման ու հրատարակման գործին: Առաջին բերքաբեր դառնում են Արեղյանի ու Կոմիտասի հրատարակած «Հազար ու մի խաչ» փոքրիկ հավաքածուների երկու պրակները (1903—1905), որոնց անմիջապես զուգակցում է Արեղյանի «Ժողովրդական խաղեր» (1904) արժեքավոր հետազոտությունը:

Արեղյանը յուրացնելով ժողովրդական երգերի ուսումնասիրության բնագավառում ժամանակի եվրոպական ու ռուս բանագիտության նվաճումները, մեզանում առաջին անգամ ձևաբանական ու իմաստային հետազոտության է ենթարկում հայ գեղջկական սիրո երգերը: Նշված ուսումնասիրության մեջ Արեղյանը պարզում է, որ գեղջկական սիրո փոքրիկ խաղիկները իրենց ձևաբանական նկարագրով պատկանում են երգերի զարգացման նախնական պարը

աստիճանին, որից հետագայում աճում ու զարգանում է ընդարձակ երգր» Պատմա-հոգեբանական մեկնակետից հիմնավորելով ժողովրդական երգերի ծագումն ու տարածումը, Աբեղյանը միաժամանակ բացահայտում է նրանց ժանրային, կառուցվածքային ու տաղաչափական առանձնահատկությունները, ձևաբանական աստիճանական փոփոխությունները։ Նա երգերը քննում է հալ ժողովրդի պատմական կյանքի ու կենցաղի որոշակի երևույթների տեսադաշտի վրա, ցույց տալով, որ խաղիկները, անկախ իրենց քնարական ու սիրային բնույթից, հնարավորությունների սահմաններում անդրադարձել են տարբեր ժամանակների պատմական իրողություններ, հայ գեղջկական կյանքի ու կենցաղի զանազան կողմեր, գյուղաշխարհի բարքեր, ավանդական սովորույթներ, ժողովրդական հոգեբանության տարբեր դրսևորումներ և այլն։

Ժողովրդական քնարերգության՝ Աբեղյանի հետազոտած երկրորդ կարևոր բնագավառը հին գուսանական նրգերն են։ Վերջիններիս ըմբռնումը հայագիտության մեջ մինչև ընթացիկ հարյուրամյակի 30-ական թվականները աղերսվում էր հորենացու «Հայոց պատմությամբ» և գրավոր այլ հիշատակարաններով ավանդված վիպական մի քանի երգերի պատառիկների հետ։ Աբեղյանը «Հին գուսանական-ժողովրդական երգեր» (1931) ծանրակշիռ հետազոտությամբ եկավ այն տեսակետին, որ հայոց հին գուսանական, աշխարհիկ քնարերգությունից մեզ հասել է մի հսկայական ժառանգություն, որ գիտությանը թեպետ վաղուց հայտնի, բայց վերագրվել էր XVI դարում ապրած Նահապետ Քուչակին։ Եվ Աբեղյանը պատմա-բանասիրական բարդ ու մանրազնին քննություններով քայլ առ քայլ հերքում է հայ բանասիրության մեջ արմատավորված այդ կարծիքը և ընդգծում, որ Քուչակին վերագրված «հայրեններ» կոչվող նախնադ երգերը տարբեր դարերում, անանուն տարբեր երգիչների ու երգչուհիների (գուսաններ) կողմից հորինված «հայոց հին աշխարհիկ ֆնաւերգության մնացորդներն են»։ որոնք ապրել են տիպիկ ժողովրդական-բանահյուսական կյանքով և գրավոր ու բանավոր միաժամանակյա ավանդամբ հասել են մինչև մեր օրերը։ Այս նշանավոր հետևությանը Աբեղյանը հանգում է հայրենների տաղաչափական կառուցվածքի, լեզվա-ոճական ատաղծի, նրանց սեռ անդրադարձված կյանքի, կենցաղի, բարքերի, հոգեբանության, և հիշյալ տաղերի ու արդի ժողովրդական երգերի միջև առկա ձևական ու իմաստային ընդհանրությունների խորիմաստ ու բազմահմուտ քննությունների միջոցով։ Աբեղյանի այդ հետազոտությունը հայ քննական բանասիրության գլուխգործոցներից է, իսկ բնույթով՝ իրրև բանասիրության ու բանագիտության խորահմուտ զուգակցման օրինակ, եզակի մի գործ է։

Ժողովրդական քնարերգության իր հետազոտած բնագավառների առկա ամբողջ նյութը Աբեղյանն ի վերջո ամփոփում է 1940 թ. հրատարակած, տարիների անխոնջ ջանքերի արդյունք «Ժողովրդական խաղիկներ» և «Գուսանական ժողովրդական տաղեր» երկու բարձրարժեք ժողովածուների մեջ։

Աբեղյանի գիտական բեղմնաշատ գործունեության մեջ կենտրոնական տեղ են գրավում հայ հին գրականության խնդիրները։ 1912 թ. «Արարատ»-ում երևան է գալիս Աբեղյանի առաջին ծավալուն հետազոտությունը՝ նվիրված հին գրական ուշագրավ երևույթներից մեկին՝ հոգևոր քնարերգությանը։ Առաջնորդվելով բանասիրական ու գրա-պատմական լայն ըմբռնումներով, Աբեղյանը հայ հոգևոր մշակույթի պատմության տեսադաշտի վրա քննում է հոգևոր երգերի ծագումն ու զարգացումը, բացահայտում նրանց գաղափարական ու

զեղարվեստական հատկանիշները: Պատմական առումով շարականները համարելով մի առանձին ու ամբողջական փուլ հայ հին գրականության մեջ՝ իբրև հին բանաստեղծության առաջին արտահայտություն, բնույթով ու բովանդակությամբ, սակայն Արեղյանը վերջնականն ու բնորոշը չի համարում զրանք հայ հին դպրության համար: Վերջինիս մեջ բուն բանաստեղծության սկզբնավորումը Արեղյանը կապում է նարեկացու անվան հետ, նրան հաճարում «մեր առաջին մեծ բանաստեղծը», որին և նվիրում է իր հաջորդ ընդարձակ հետազոտությունը՝ «Ս. Գրիգոր Նարեկացի» (1916): Այստեղ Արեղյանը նարեկացու պոեզիան հակադրելով հին հոգևոր բանաստեղծությանը գտնում է, որ «մինչ շարականները գուրկ են ինքնուրույնությունից և կյանքից ու բնությունից, այժմ մի իսկատիպ քնարերգություն է առաջ դալիս», որի մեջ «հակառակ ճղնավորական մուայլ ոգուն» իրական կյանքն ու բնությունն է բանաստեղծության նյութ ու սկզբներ դառնում: Արեղյանը նարեկացի-բանաստեղծի պատմական մեծ միսիան տեսնում է նաև այն բանում, որ նա բանաստեղծությունը դուրս է բերում իր սառն ու անկենդան վիճակից և դարձնում անհատական անկեղծ ներշնչման առարկա, որ նա բանաստեղծության առարկա է դարձնում կինը, նրա անձն ու արտաբերը:

Արեղյանն առաջին անգամ հայ գրականագիտության մեջ նարեկացուն դիտում է զրա-պատմական նոր տեսանկյունից, եվրոպական Վերածնունդից զեռես շատ առաջ իբրև վաղ վերածննդի ուղղություն ու զաղափարները մեր բանաստեղծության մեջ արմատավորողի. մի հայացք, որին Արեղյանը պատմական լայն առումով անդրադառնում է հաջորդ իսկ տարին (1917) հրապարակած «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» ուրվագծի մեջ: Վերջինս տեսական այն հաստատուն ողնաշարն էր, որի վրա ապագայում բարձրացավ Արեղյանի «Հայոց հին գրականության պատմությունը»: «Ընդհանուր տեսություն» մեջ ուրվագծվում էին հայ բազմադարյան գեղարվեստական գրականության պատմական զարգացման հիմնական փուլերը սկսած հայ էթնոսի ձևավորման վերաբերյալ եղած առասպելա-պատմական բանահյուսությունից, վերջացրած միջնադարի վերջին բանաստեղծ նաղաշ Շովնաթանով: Հայ բանաստեղծության ծագումն ու զարգացումը դիտվում ու բննվում էր հայ ժողովրդի հազարամյա պատմա-բաղադրական, կուլտուր-տրն-տեսական կյանքի լայն տեսադաշտի վրա, գրական երևույթների փոփոխությունները մեկնաբանվում էին կյանքում կատարվող պատմա-հասարակական և ապա՝ գաղափարաբանական կարևոր տեղաշարժերով: Այստեղ առաջին անգամ հայագիտության մեջ, ելակետ ունենալով գրականության մեջ անդրադարձված հասարակական ոգին ու աշխարհայեցողությունը, վերաբննվում և վերաիմաստավորվում էր գրականության զարգացման մի ամբողջ պատմաշրջան. XI—XVII դարերի հայ գրականությունը Արեղյանը դիտում ու մեկնաբանում է իբրև հայկական վերածնության մի գրականություն, որը թոթափելով նախորդ շրջանի կրոնական ոգին, բնույթով դառնում է հեթանոսականի վերածնություն՝ աշխարհիկ ոգու վերջնական հաղթանակով: Սա մի նոր տեսություն էր հայագիտության մեջ¹, որն առավել ճշգրտվում ու խորացվում է Արեղյանի կողմից հետագա մի շարք այլ աշխատությունների և մասնավորապես «Հայոց հին գրա-

¹ Ի դեպ, անհասկանալի է, թե ինչո՞ւ հայկական վերածննդին նվիրված իր աշխատության մեջ (Армянский ренессанс, М., 1963, եււյնը՝ հայերեն, Երևան, 1964), Վ. Զալոյանը չի նշում հայկական վերածննդի տեսության հիմնադրի անունը:

ևանության պատմության» մեջ: Իսկ մինչ այդ Արեղյանը նոր խնդիրներ է առաջ քաշում ու նորանոր կողմերից է քննում հայ բազմադարյան գրականության այլևայլ երևույթները: «Հայոց միջնադարյան առակաները և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ» ուսումնասիրությամբ Արեղյանը միջնադարյան արձակի այդ գողտրիկ հուշարձանների մեջ բանասեր գրականագետի նրբամտությամբ բացահայտում է միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նորովի գնահատելով առակաների պատմա-գեղարվեստական արժեքը: Հայոց հին գրականության տարբեր կողմերի ու երևույթների վերաբերյալ Արեղյանի նորանոր մտահանդումները, որ գրսևորվում են «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրականության սկիզբը», «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» (1941), «Կյանքի և աշխարհայեցողության փոփոխությունը X դարի վերջերում և XI դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնության շրջանի» (1943), «Հովհաննես Սարկավազ վարդապետ» (1944) հետազոտություններում, ինչպես նաև հին գրականությանն ու բանահյուսությանը նվիրված նախորդ բոլոր ուսումնասիրություններն ու դրանց արդյունքները Արեղյանն ամփոփում է «Հայոց հին գրականության պատմություն» (1944, 1946) երկհատոր մոնումենտալ աշխատության մեջ: Այստեղ Արեղյանը ելնելով հայագիտության նվաճումներից, ընդհանուր դրականության ու մշակույթի պատմության փորձից, հայոց հին բազմադարյան գրականությունը ենթարկում է մի կուռ համակարգված տեսության, հանդես գալով իբրև խոշոր նորարար: Արեղյանը դրա-պատմական հետազոտության է ենթարկում հին մատենագրությունից սոսկ գրական գեղարվեստական հուշարձանները և բնույթով դրանց հետ աղերսվող պատմա-գրական և այլ կարգի երկերը: Առարկայի ըմբռնմամբ հենց սահմանազատվելով նախորդներից, Արեղյանն այդ հակադրությունն առավել ևս խորացնում է կոնկրետ գրական դեմքերն ու երևույթները քննելիս և հայ հին գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունները սահմանելիս: Սթե հին գրականության նախորդ պատմաբանները բավարարվում էին սոսկ հեղինակների վերաբերյալ փաստական տվյալներ հաղորդելով, ապա Արեղյանը դրա հետ մեկտեղ դեղագիտական խոր ու բազմակողմանի վերլուծման է ենթարկում հին հեղինակների երկերը և դրանց մեջ արված հայտնի և անհայտ իրականությունից ու հիմնական գաղափարաբանությունից ելնելով, սահմանում դրական դարաշրջանների էական առանձնահատկությունները: Նման ընդհանրացումներով է Արեղյանը պարբերացնում հայ հին գրականության զարգացման պատմաշրջանները, հակառակ գրականության նախորդ պատմաբանների պարբերացման ձևական սկզբունքների: Արեղյանը, հին գրականության առաջին, անգիր շրջանը (նկատի առնելով հիշյալ շրջանի ժողովրդական բանահյուսության մեջ պատմական իրականության գեղարվեստական ընկալման ու անդրադարձման եղանակը) կոչում է «նախնական առասպելա-պատմական բանահյուսություն»: Սերբուրդ շրջանի (V—X դդ.) գրականության բնույթը, նրա մեջ առտացոված պատմական իրականությունն ու գաղափարական հիմնական միտումները նկատի առնելով Արեղյանն այդ շրջանն անվանում է «Սկեղեցա-թաղաքական մարտման գրականություն»:

Սերբուրդ շրջանը (XI—XVII դդ.) «Վերածնության գրականությունն» էր, որի սկզբնավորումն ու զարգացումը այստեղ հիմնավորված էին սոցիալ-տնտեսական ու հասարակա-քաղաքական պայմանավորվածությամբ:

Արևիդյանի դրա-պատմական պարբերաշրջանները ըստ էության էին վերարտադրում ու բնութագրում հայ հին դրական պոեզիաների զարգացման օրինաչափությունները, որոնք մակարկված ու սահմանված էին հայ ժողովրդի պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, զաղափարաբանական կյանքի բարդ երևույթների բազմակողմանի հաշվառումով:

Արևիդյանի մոտքը հայ լեզվագիտության ասպարեզը ևս վճռական եղավ նախորդ երկու բնագավառների նման: Նա իր գիտական մեծ անհատականություններում ու էրուդիցիայով եկավ վերաբնելու և վերակարգելու արևելահայերենի քերականագիտական նորմաներն ու համակարգը, ստեղծելու իր սեփական համակարգն ու ուսմունքը:

Դեռևս 1890-ական թվականների սկզբներին հայոց լեզվի ձևական խնդիրներին՝ ուղղագրությանը, ուղղախոսությանն ու շեշտադրությանը նվիրված իր անդրանիկ ուշադրով հողավածներում Արևիդյանը հանդես է գալիս իրեն հայերենի քերականական խնդիրների նորովի հետազոտող և ուղղագրական բարենորոգումների նախանձախնդիր: Հետագա տասնամյակներին արդեն իր կազմած քերականական ձևականների ու լեզվագիտական հետազոտությունների մեջ Արևիդյանն աստիճանաբար ներկայացնում է քերականագիտական իր նոր մտահղացումները և ձևավորում իր նոր համակարգն ու տեսությունը: Առաջին մեծ նորությունը՝ 1906 թ. լույս տեսած «Աշխարհաբարի քերականությունն» էր, ուր Արևիդյանը ելնելով լեզվաբանական նորագույն ուսմունքներից, կառուցվածքալին կարևոր հիմնադներում փոխում էր հայ քերականագիտության ավանդական համակարգը: Քերականության երկու ղխավոր բաժինները՝ ձևաբանությունն ու շարահյուսությունը բնորոշելով իրեն միասնական ամբողջություն և խոսքի մեջ էականը համարելով գործողությունը կամ եղելությունը, Արևիդյանը բայը դարձնում է իր կուռ ու տրամաբանական համակարգի կենտրոնը, որի շուրջն էին համախմբվում խոսքի մյուս բոլոր մասերն իրենց քերականական հատկանիշներով: Արևիդյանի բայականությունը քերականագիտական համակարգը նորություն էր հայ լեզվաբանության պատմության մեջ: Նորություն էր ոչ միայն բնահանուր համակարգը, այլ նրա բաղկացուցիչ քերականագիտական տարրերից շատերը: Այսպես. Արևիդյանը կատարելագործում, կուռ ու միասնական համակարգի է վերածում աշխարհաբարի թերման և բայական կառուցվածքի ուսմունքը, այն հարստացնելով քերականագիտական մի քանի նոր հասկացություններով: Հակառակ հայ քերականագիտության մեջ իշխող՝ Պարսպանյանի տրամաբանական քերականության համակարգին ու մրմրումներին, ելնելով հայոց լեզվի պատմական, ձևաբանական ու իմաստաբանական զարգացման միտումներից, ինչպես և լեզվի հոգևբանական ընկալումներից, Արևիդյանն արևելահայ աշխարհաբարի ձևաբանության մեջ բնորոշում է հինգ հոլով: Նա հոլովական համակարգից դուրս է թողնում սեռականն ու հայցականը իրեն սեփական հոլովածն չունեցող հասկացություններ: Բայերի կազմության մեջ Արևիդյանը առաջին անգամ մոծում է սոսկածանցավոր, բազմապատկական և պատճառական բայերի հասկացությունը. բայերի եղանակների մեջ մոծում է ևնթադրականի և հարկադրականի հասկացությունները: Նոր բմբնումով ու մոտեցմամբ բննելով դերբայները, նախկին որսի փոխարեն հայոց լեզվի համար բնորոշում է յոթ դերբայ, ավելացնելով երեքը՝ անկատարը, վաղակատարը և հարակատարը (վերջին երկուսը իրեն անցյալ դերբայ): Արևիդյանը հիմնովին փոխում է աակավին դրաբարի քերականության աղղեցությամբ հա-

րատևող աշխարհաբարի խոնարհման համակարգը, համապատասխան փոփոխություններ մտցնելով նաև ժամանակի հասկացությունների մեջ: Հայ քերականության մեջ Աբեղյանը մտցնում է նաև կապը իբրև խոսքի մաս, այն բաժանելով նախադրության և հետադրության, շաղկապի հետ միասին դնում է «զոդ» ընդհանուր անվան տակ: «Աշխարհաբարի քերականության» մեջ միայն թեթևակի շոշափված հոլովների և բայի հետ աղերսվող որոշ խնդիրներ խոր ու մանրակրկիտ հետազոտության են ենթարկվում փոքր-ինչ ուշ գրված «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909) և «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» (1912) մեծարժեք ուսումնասիրություններում: Իսկ իր քերականագիտական ողջ ուսմունքն ու համակարգը առավել կատարելագործված ձևով Աբեղյանն ամփոփում է «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912) և «Հայոց լեզվի տեսություն» (տպագրված 1931 թ.) ծանրակշիռ աշխատությունների մեջ: Իրանցում, ժամանակի լեզվաբանական վերջին նվաճումների լույսի տակ, Աբեղյանը գիտական խոր ու բազմակողմանի քննության է ենթարկում ժամանակակից հայոց լեզուն գրեթե իր բոլոր էական բաղադրիչներով և դրանով իսկ հիմք դնում արդի հայերենի գիտական քերականությանը:

Աբեղյանը առաջին անգամ խոր ու մանրակրկիտ հետազոտում է արդի արևելահայերենի հնչյունաբանությունը, սահմանում է նրա տեսությունն ու համակարգը: Ապա հետազոտում է բառերի իմաստաբանությունը և ելնելով բառերի նշանակությունից կատարում է բառակերպերի նոր դասակարգում: Գիտական բացառիկ խորությամբ են ուսումնասիրվում հայոց լեզվի բառակազմության ձևերն ու օրինաչափությունները, բացահայտվում բառաբարդությունների ու ածանցների տեսակներն ու կիրառությունները: Ինչպես նշվել արդեն, բոլորովին նոր մոտեցմամբ է հետազոտվում հայոց լեզվի ձևաբանությունը, հատկապես հոլովումը և բայական համակարգն առհասարակ:

Շարահյուսության բնագավառում Աբեղյանը հանգես է գալիս իբրև հայոց լեզվի շարահյուսության գիտական մշակողն ու կատարելագործողը: Նա մշակում է հայոց լեզվի շարահյուսական բոլոր բնութանունները, սահմանում կապակցության պարզ և բարդ բազմապիսի ձևերի շարահյուսական օրինաչափությունները: Այդ բոլորով հանդերձ նա մի նոր աստիճանի է բարձրացնում հայ քերականագիտությունը: Ինչպես իրավացիորեն նկատված է արդեն, նա հայերենի քերականությունը դուրս է բերում իր նորմատիվ վիճակից և դնում փիլիսոփայական բարձրության վրա: Աբեղյանի տեսադաշտից դուրս չեն մնացել դրաբարն ու միջին հայերենը, որոնք քերականական նորովի հետազոտությունների են արժանանում «Գրաբարի համառոտ քերականության» (1907) մեջ և «Գուսանական-ժողովրդական տաղեր», «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատությունների առանձին հատվածներում:

Աբեղյանի գիտական հետազոտությունների վերջին առարկան, որ մասամբ մտնում է լեզվաբանության, մասամբ և դրականագիտության ոլորտը՝ հայերենի տաղաչափությունն է: Տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով ու նպատակներով հայերենի տաղաչափությանը անդրադարձել էին հայ քերականներն ու բանասերները: Աբեղյանը եկավ այստեղ ևս ասելու իր ծանրակշիռ խոսքը և ստեղծելու հայկական տաղաչափության գիտական կուռ, ամբողջական ու սխտեմավորված ուսմունքը: 1910-ական թթ. գրված «Հայոց լեզվի տաղաչափություն» (տպագրված 1933 թ.) աշխատության մեջ Աբեղյանը

ժամանակի դասական բանասիրության պահանջներին համապատասխան գիտական խոր ու մանրակրկիտ հետազոտության է ենթարկում հայ հազարամյա բանաստեղծության տաղաչափական իրողությունները, բացահայտում նրանց առանձնահատկություններն ու դարավոր զարգացման օրինաչափությունները: Ելնելով հայոց լեզվի առանձնահատուկ շեշտից ու առողանությունից, հակառակ հայագիտության մեջ մինչ այդ հայերեն ոտանավորը վանկային համարելու արմատացած տեսակետի, Աբեղյանը ապացուցում է, որ մեր ոտանավորը վանկաշեշտային է, իր «ուրույն բնավորությամբ մի առանձին տեղ է բռնում ուսերեն և ֆրանսերեն ոտանավորների միջև»: Ապա մանրամասնորեն ուսումնասիրելով հայ հին ու նոր բանաստեղծության տաղաչափական բոլոր ճերպերն ու տեսակները, Աբեղյանը սահմանում է, որ հայկական ոտանավորի բազմազան շափերը հանդում են երեք հիմնական ձևի. բարձրացող ութմով լամբական, անալեստյան և լամբ-անալեստյան ոտանավորներին: Իսկ պատմական զարգացման առումով հայկական ոտանավորների շափերը իրենց հիմնական ձևերով ու ենթատեսակներով արդեն ձևավորված ու զործածական են եղել VII—XI դդ. հայ բանաստեղծության մեջ:

Այսպես ուրեմն, Մանուկ Աբեղյանի գիտական ողջ կյանքը եղել է հայտնագործությունների, նորարարության և գիտական սիստեմաներ ստեղծելու մի տարեգրություն, որոնցով հայագիտությունը, հատկապես իր երեք կարևոր ճյուղերով բարձրացավ զարգացման մի նոր աստիճանի և մեծապես հարստացավ:

«Աբեղյանով,— գրել է Ավ. Իսահակյանը,— մեր ազգային հոգևոր միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, յրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»:

ВЕЛИКИЙ АРМЕНОВЕД

(К 100-летию со дня рождения Манука Абегиана)

С. Б. АРУТЮНЯН

(Р е з ю м е)

Манук Абегиан — крупнейший представитель классического арменоведения, в деятельности которого сосредоточиваются три области арменоведения: армянская фольклористика, армянская лингвистика, историография древнеармянской литературы. Начав свою научную деятельность еще в конце XIX века, он, вооруженный передовыми знаниями своего времени, приступил к всестороннему изучению различных жанров армянского фольклора, а именно: армянский народный эпос, мифы, эпические песни, древние и новые лирические песни, верования и т. д. Тем самым он является создателем армянской фольклористики, как научной дисциплины.

Глубоко исследовав фонетику, морфологию и синтаксис современного армянского языка, Абегиан создал теорию и строгую научную систему армянской грамматики. Всесторонне исследовав многовековое искусство армянского стихосложения, он создал также новую научную дисциплину по армянской метрике.

В течение всей своей научной деятельности Абегиан исследует выдающихся представителей и факты древнеармянской литературы, устанавливает основные периоды ее развития, раскрывает ее внутренние закономерности и тем самым создает научную историю древнеармянской литературы.

Абегиан в своих многогранных и разнообразных исследованиях является автором ряда крупных научных открытий и выступает как выдающийся новатор. Благодаря своей яркой индивидуальности и огромной эрудиции Абегиан выводит названные области науки из консервативной ограниченности на широкую арену научных исследований и тем самым поднимает арменоведение на новую ступень развития. Своими огромными научными заслугами Манук Абегиан знаменует целую эпоху в истории арменистики.